

Ասոնցմէ դուրս՝ ուրիշ հետաքրքրական վաւերագրի մըն ալ կը հանդիպինք, որ կը պատկանի Լեւոնի : Ասիկա 200 Փրանկի փոխարէն տրուած անդորրագիր մըն է : Բայց կերելի թէ նախապէս ամբողջ գումարին քանակութիւնն եղած է 1000 Փրանկ, եւ՝ հակառակ տրուած հրամանի՝ Լեւոն վճարուած է 500 Փրանկ . իսկ մնացած 500-ը դանձելու համար Լեւոն ստիպուած է դիմել զխաւոր գանձապահին, որ սակայն՝ առ ի չգոյէ դրամի՝ վճարած է 200 Փրանկ միայն . ուրեմն Լեւոնի առնելիքը մնացած է դեռ 300 Փրանկ : — Չեմ դիտեր թէ արդեօք այս վաւերագրին մէջ յիշուած 1000 Փրանկը Լեւոնի յատկացուած ամսաթոշակի երկամսեայ գումարն է, թէ Լեւոնի կողմէ արքունի դանձին փոխ տրուած դրամ մը :

Ահա այն վաւերագիրը .

*Անդորրագիր Լեւոնի, 200 Փրանկի փոխարէն (1)*

Լեւոն, շնորհիւն Աստուծոյ, քաղաւոր Հայոց : Ամէն անոնք որ ներկայ գտնուին այսի տեսնեն՝ զիսնան, որ պերճաւոր Թաղաւորին պատերազմական զանապառ Յովհան Շանսպրիմէ, որ քիչ ժամանակ առաջ ընդհանուր հարկահաւաք էր եւ յիշեալ քաղաւորին կողմէ կարգուած վերակացու ինչ ինչ փոխառութիւններ զանձելու համար, ստացանք երկուսորիւր ճրանկ, իբրեւ զեղչ հինգհարիւր ճրանկի վրայէն որուն ամբողջական վճարումն անցած յունուարի 16-ին յիշեալ Յովհան Շանսպրիմի կողմէ գրուած քղբով հրամայուած էր Պարիսի հարկահաւաք Միքայէլ Սարլոնին : Արդ հազար ճրանկի վրայէն՝ հինգհարիւր ճրանկ միայն վճարեց մեզ Միքայէլ, ինչպէս կը տեսնուի իր մուշակէն, որ գրուած է անցած փետրուարի 7-ին : Յիշեալ երկուսորիւր ճրանկն ստացած ենք եւ մեր գոհունակութիւնը կը յայտնենք անոր համար . իսկ յիշեալ պերճաւոր Թաղաւորը, Յովհան Շանսպրիմն ու միւս բոլոր անձերն որոնց անդորրագիր տալ պէժ էր՝ պարտք տալու կը կացուցանենք : Ի վկայութիւն ասոր՝ ներկայ անդորրագրին վրայ մեր անձնական կնիքը դրինք : Տուեալ ի Պարիս, 25-րդ օրն մարտի, շնորհալ քուին 1388 :

Թաղաւորին կողմէ՝

ՊԵՌՆԵԼ



(1) Բնագիրը տե՛ս նմանահամուած առանձին թերթին վրայ, թիւ 71, եւ գրքիս վերջը՝ Document XXIX .